

ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ



[gahovhannisyan](#)

September 11th, 17:54

Ես գիտեյի, որ ժամանակին զբաղվել եմ այդ հարցով, հետո ինչ-որ բան խառնվեց ու մոռացվեց: Այսօր ես գտա այն գրքերից մեկը, որը գնել էի շատ վաղուց ինքնուսուցման նպատակով:

Միրով ձեզ եմ ներկայացնում այս գիրքը, որը պարզապես կշարադրեմ այստեղ՝ հետագա արտատպելու հեշտ լինելու համար: Շարադրադնքը ըստ բնօրինակի է:

Այսպիսով ներկայանցում եմ

ՌԱՖԱՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ

ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, "ԱՐԵՒԻԿ"

1991

ԳՄԴ 81.2Հ-9

Ի 684

Խմբագիր՝ Հ. Մեսրոպյան

Իշխանյան Ռ. Ա.

Դասական ուղղագրության կանոններ:

(Դպր. միջին և բարձր տարիքի համար) Ռաֆայել Իշխանյան: Եր.: Արևիկ 1991, 32 էջ:

Ձեռնարկում բերված են հայ դասական ուղղագրության հիմնական կանոնները: Յուրաքանչյուր բառապատկեր լուսաբանվում է մի քանի տեսանկյունից, պարզաբանվում օրինակներով:

Ձեռնարկի նպատակն է օգնել դպրոցական ընթերցողին ճիշտ կարդալ ու գրել դասական ուղղագրությամբ:

Ի 4602000000 / 707 (01) - 91

ISBN 5-8077-0503-3

(C) Ռաֆայել Իշխանյան, 1991

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ազգային պետականության վերականգման այս շրջանում, երբ վերանայվում են անցյալի սխալները, երբ անհամեմատ լայն կապեր են ստեղծվում Սփյուռքի հետ, երբ ավելի է ընդլայնվում խոսքի ու մամուլի ազատությունը, Հայաստանում այսպես թե այնպես դարձյալ շրջանառության մեջ է մտնում նաև դասական ուղղագրությունը: Վերջինիս իրավունքների վերականգնումն ու վավերացումն, ինչ խոսք, ժամանակի խնդիր է, որը պետք է իր լուծումը գտնի պետական ու գիտական մակարդակներով: Մակայն, քանի որ Հայաստանի Հանրապետության հասարակությունը, հատկապես դպրոցականները եւ ուսանողությունը, մամուլի և ամենատարբեր գրականության միջոցներով արդեն իսկ լայնորեն հաղորդակցվում են դասական ուղղագրությանը, ուստի հրատարակչությունը անհրաժեշտ համարեց հրապարակ հանել պրոֆ. Ռ. Իշխանյանի կազմած "Դասական ուղղագրության կանոններ" ուսուցարան-գրքույկը՝ նպատակ ունենալով նպաստել դասական ուղղագրությամբ տպագրված և տպագրվող գրականության առավել դյուրին ընկալմանը:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ուղղագրությունը յիշողություն է, պետք է բառերի գրությունը յիշել տառ առ տառ: Կան նաև ուղղագրական կանոններ, որոնք օգնում են բառապատկերները յիշելու:

Ստորև բերուած են դասական ուղղագրութեան այն հիմնական կանոնները, որոնք տաբեր են Հայաստանում եւ ԽՍՀՄ-ի հայաբնակ այլ վայրերում այժմ գործող ուղղագրութիւնից:

*Դասական ուղղագրութիւնը գլխաւորապէս երեք դժուարութիւն ունի. 1) պետք է յիշել բառասկզբում յ գրուող, բայց **հ** արտասանուող բառերը (յատուկ, յաջող, յանցանք եւ այլն), 2) պետք է յիշել բառամիջում **է** ունեցող բառերը (կէտ, կէս, սէր եւ այլն), 3) պետք է յիշել բառամիջում **օ** ունեցող բառերը (կարօտ, աղօթք, մօտ եւ այլն): Այս ձեռնարկում բերուած են այդ երեք խումբ բառերի ցուցակները:*

Դասական ուղղագրութեան միւս տարրերը աւելի դիւրին են յիշուում: Ձեռնարկում կան կանոնների կրկնութիւններ. մի շարք բառերի գրութեան որեւէ կանոնը յիշելու համար, այն լուսաբանուած է երբեմն

երկու, նոյնիսկ երեք անգամ, տարբեր տեսանկյուններից:

Պէտք է նկատի ունենալ նաեւ, որ դասական ուղղագրութեանը վերադառնալու խնդիրը հետշի կամ դժուարի հետ չէ, որ առնչուած է: Դասական ուղղագրութիւնը հայ մշակոյթի մի անբաժան հատուածն է, որ մեր ժողովրդից խլուեց 1922 թ.: Ինչպէս որ այժմ ջանում ենք վերականգնել մեր ազգային դպրոցը, հայոց ճշմարիտ պատմութիւնը, հայկական շատ սովորութիւններ, սօճեր, ազգային մտածողութիւնն առհասարակ, այդպէս էլ ճիշտ կլինի վերականգնել մեր դարաւոր ազգային ուղղագրութիւնը:

Դասական ուղղագրութեամբ գրելով՝ սկզբնական շրջանում, անշուշտ, որոշ դժուարութիւններ կլինեն, սխալներ կանենք: Բայց դա էական չէ, քանի որ աստիճանաբար վարժուելով՝ սխալները կնուազեն, կվերանան:

Դասական ուղղագրութեանն անցնելու դէպքում հնարաւոր կլինի նաեւ նրա կանոններում որոշ բարելաւումներ կատարել:

=====

Բովանդակութիւն

[Հայերէնի դասական այբուբենը](#)

[ւ-ի եւ վ-ի գրութիւնը](#)

[ու-ն վ-ի արժէքով](#)

[է տառի գրութիւնը](#)

[ոյ-ի եւ եա-ի գրութիւնը](#)

[հ թե յ](#)

[Բառավերջում յ](#)

[Բառամիջում օ](#)

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ
(մեծատառ, փոքրատառ)

| | |
|------|------|
| Ա, ա | Մ, մ |
| Բ, բ | Յ, յ |
| Գ, գ | Ն, ն |
| Դ, դ | Շ, շ |
| Ե, ե | Ո, ո |
| Զ, զ | Չ, չ |
| Է, է | Պ, պ |
| Ը, ը | Ջ, յ |
| Թ, թ | Ռ, ռ |
| Ճ, յ | Ս, ս |
| Ի, ի | Վ, վ |
| Լ, լ | Տ, տ |
| Խ, խ | Ր, ը |
| Օ, ծ | Ց, ց |
| Կ, կ | Ի, լ |
| Հ, հ | Փ, փ |
| Ձ, ձ | Ք, ք |
| Ղ, ղ | Օ, օ |
| Ճ, ճ | Ֆ, ֆ |

ւ-ի եւ վ-ի գրությունը

Ինչպես հայոց դասական այբուբենն է ցոյց տալիս, այժմ տարածում գտած այբուբենից դուրս է մնացել **Ի, լ** տառը, փոխարենը արհեստականորեն այբուբեն են մտցուել **ու, և** նշանագրերը, որոնք իրականում երկու տառերի միացություններից են կազմուած, **և-ը ե, լ** տառերի միացումն է, **ու-ն՝ ո, լ** տառերի:

Մաշտոցը **Ի, լ** տառը (կոչուում է **յիւն** կամ **վիւն**) դրել է **ց** եւ **փ** տառերի մէջ: Նոր ուղղագրութեան պաշտպաններն այդ տառը հանել են մաշտոցեան այբուբենից: Դասական ուղղագրութիւնը վերականգնելիս առաջին գործը պէտք է լինի **ւ** տառը նորից իր տեղը դնելը: Այդ տառի գործածման օրէնքը հետեւեալն է:

Բառասկզբում այն երբեք չի գրուում: Բառամիջում եւ բառավերջում **ա, ե, ի** ձայնաւորներից յետոյ **վ** լսուելիս գրուում է **ւ**, ինչպէս՝

| | |
|----------|---------|
| աւան | անձրեւ |
| աւարտ | բարեւ |
| աւել | բեւեռ |
| աւետել | Երեւան |
| բաւական | Սեւան |
| բաւարար | եւ |
| գաւաթ | նաւեւ |
| գրաւել | կարեւոր |
| գաւիթ | հեւալ |
| խաւար | ձեւ |
| սարկաւազ | տերեւ |

եւ այլն

Արագագրութեան դէպքերում ե-ն միացվում է **ւ**-ին եւ գոյանում է **և** կրճատագիրը. այդպէս կարելի է գրել՝

| | |
|-------|-------|
| նաև | բևեռ |
| և | Երևան |
| անձրև | Սևան |
| բարև | անձրև |

Յիշենք, որ **ի** տառից յետոյ բառերի վերջում, ինչպէս եւ միջում՝ ձայնաւորից առաջ նոյնպէս գրուում է **ւ**՝ դարձեալ **վ**-ի արժէքով. օրինակ՝ **կուի, շիւ, արծիւ, թիւ, անիւ, անթիւ, առթիւ, պատիւ, դիւանագէտ, հիւանդ, ճիւղ, ջիւան** եւ այլն: Բայց միշտ չէ, որ **ի** տառից յետոյ **ւ** տառը **վ**-ի արժէք ունի:

Բաղաձայնից առաջ **ի** եւ **ւ** տառերը բոլորովին այլ նշանակութիւն ունեն. նոր ուղղագրութեան **յու** երեք տառի փոխարէն ըստ դասական ուղղագրութեան գրուում է **իւ** երկու տառը, ինչպէս՝

| | |
|-------|------------|
| արիւն | բարութիւն |
| սիւն | ծուլութիւն |
| ալիւր | կրթութիւն |

| | |
|--------|-------------|
| բիւր | թերութիւն |
| հիւր | հնչիւն |
| հիւլէ | քաղցրութիւն |
| հիւսել | իրաքանչիւր |
| կորիւն | իւղ |
| ճիւղ | իրացնել |

եւ այլն

Հայերէնում է, օ տառերից յետոյ երբեք ւ չի գրվում:

Պէտք է յիշել նաեւ, որ ւ տառը **n**-ից յետոյ գոյացնում է ձայնավոր հնչիւն՝ **ու**: Վերն ասուեց, որ մեր **ու**-ն ոչ թէ մի տառ է, այլ՝ երկու (ֆրանսերէնում էլ այդ հնչիւնը երկու տառից է բաղկացած՝ *ou*): Այս պատճառով բառերի մէջ եւ վերջում **n** տառից յետոյ լսուող **վ**-ն գրում ենք հէնց **վ**-ով եւ ոչ թէ **ւ**-ով: Օրինակ, **կով, գովք** բառերը եթէ գրենք **ւ**-ով, կունենանք **կու, գուք**, որ բոլորովին այլ կերպ կկարդացուի: Այս պատճառով գրում ենք՝ **ծով, կով, հով, սով, բովանդակութիւն, գովք, ժողովուրդ, սովորութիւն, գրքով, աչքով** եւ այլն:

Պէտք է յիշել նաեւ, որ բարդ ու ածանցաւոր բառերի մէջ եթէ երկրորդ բաղադրիչն այնպիսի բառ է, որ սկզբում ունի **վ**, այդ **վ**-ն պահպանում ենք, ինչպէս, օրինակ, **պատմավէպ** բարդ բառի մէջ երկրորդ բառը **վէպ**-ն է, ուրեմն **վ**-ն պահպանում ենք, **գահավէժ**-ում երկրորդ բառը **վէժ**-ն է (վիժել), ուրեմն **վ**-ն պահպանում է, **հրավառ**-ի մէջ երկրորդ բառն է **վառ**, ուրեմն **վ**-ն պահպանում ենք, **կարեվեր**-ի մէջ երկրորդ բառն է **վեր**-ը (վերք), ուստի **վ**-ն մնում է, **անվաւեր** բառի մէջ **ան** ածանցից յետոյ **վաւեր** բառն է, սկզբի **վ**-ն պահպանում ենք, **անվերջ** բառի մէջ **ան**-ից յետոյ **վերջ** բառն է, **վ**-ն մնում է եւ այլն:

Ու-ն **վ**-ի արժեքով: -- Բառերի մէջ **ա, ե, է, ի, ո** ձայնաւորներից առաջ, բաղաձայնից եւ յ կիսաձայնից յետոյ **վ** լսուելիս դասական ուղղագրութեամբ ւ կամ **վ** չի գրւում, այլ նրանց արժեքով գրւում է **ու**, ինչպէս՝

| | |
|---------------|-----------|
| հարուած | հաշուապահ |
| ջարդուածք | շուար |
| կալուածք | նուազ |
| թուաբանութիւն | շուայտ |
| պատուական | նուէր |

| | |
|-----------|-----------|
| ստուեր | հալուել |
| նուոց | ձուաձեւ |
| Դուին | Զուարթ |
| նուազել | Նուարդ |
| սրուել | լեզուաբան |
| հագուադէպ | եւ այլն |

Տողադարձի ժամանակ առաջարկում է **ու**-ի փոխարեն **ւ** գրել, ինչպէս **թուական -- թը-ւական, Դուին -- Դը-ւին**, բայց սա պարտադիր կանոն չէ:

Ածանցաւոր ու բարդ բառերի մէջ եթէ առաջին բաղադրիչն աւարտուում է **ւ**-ով, յաջորդ ձայնաւորը դեր չի խաղում, **ւ**-ն մնում է: Օրինակ, գրում ենք **գրաւել**, քանի որ սկզբում **գրաւ** բառն է, **ւ**-ն մնում է: Կամ՝ **հարաւային**, նոյնպէս գրում ենք **ւ**-ով, քանի որ **հարաւ** բառն է առկայ, նոյնը ն՝ **ծարաւած, կաւահող, դաւադիր** եւ այլն:

Եթէ բառը աւարտուում է **ւ** կամ **վ** տառերից մէկով, կրաւորական ձեւի դէպքում այսպիսի տեսք է ընդունում՝ **հաշուել, ներգրուել, գովուել**: Այսինքն՝ **հաշիւ+ուել, ներգրաւ+ուել, գով +ուել**: Յիշենք նաեւ այսպիսի ձեւեր՝ **հրահանգաւորում է, հրահանգաւորուած, հրահանգաւորուեց, վառում է, վառուած, վառուեց, կանոնաւորում է, կանոնաւորուած, կանոնաւորուեց** և այլն:

Կարելոր է յիշել նաեւ, որ կան **ւ** տառով կազմուած մասնիկներ՝ **-աւոր, -աւէտ (-ւէտ), -աւուն**. սրանցով կազմուած բառերի մէջ **ւ**-ն պահպանուում է, ինչպէս՝ **մեծաւոր, ձայնաւոր, յանցաւոր, հոտաւէտ, բուրաւէտ, շիկաւուն** և այլն:

Արեւելահայերը **վ**-ի արժէքով բառամիջում **ու**-ով գրուող բառերի մէջ **ո**-ն կրճատում են, թողնում են **ւ**-ը եւ գրում են ոչ թէ **հարուած**, այլ՝ **հարւած**, այդպէս էլ՝ **թաւաբանութիւն, նւէր, պատուէր, նւալ, սրւել, սւաղել, Նւարդ** եւ այլն:

Մինչև 1922 թ. փոփոխութիւնը Հայաստանում ընդունուած էր գրութեան այս ձեւը:

Ու ձայնաւորից առաջ **ւ** դնելն ընդունուած է, ինչպէս՝ **գրւում է, սրւում է, համարւում է, թւում է** և այլն:

Այսպիսով, դասական ուղղագրութեամբ **վ** հնչիւնը արտայայտուում է երեք ձեւով՝ **վ, ւ** տառերով եւ **ու** երկտառով՝ ըստ վերը բերուած կանոնների:

Է տառի գրությունը

Դասական ուղղագրութեամբ բառավերջում է լսուելիս միշտ է է գրում, ինչպէս՝ **ափսէ, բազէ, գուցէ, գոնէ, թէ, գրեթէ, միթէ, եթէ, մարգարէ, կեցցէ, որևէ, որևիցէ, երբևէ, երբևիցէ, միջօրէ, Վահէ, մանրէ, Կարինէ, Մարինէ** եւ այսպէս շարունակ: Բառավերջում երբեք **է** չի գրում:

Բառերի մէջ է լսում և է գրում է գլխաւորապէս այն դէպքերում, երբ այդ է-ն կարող է հնչիւնափոխուել ու դառնալ **ի**, օրինակ, **գէր** (գիրանալ), **գէտ** (գիտելիք), **դէմ(ք)** (դիմագիծ), **դէպ(ք)** (դիպուած), **դէտ** (դիտել), **կէզ** (կիզել), **զէն(ք)** (զինել), **ծէս** (ծիսակատարութիւն), **մէջ** (միջին), **մէտ** (միտում), **կէս** (կիսել), **մէզ** (միգապատ), **յաւէտ** (յաւիտեան), **սէզ** (սիզաւէտ), **նուէր** (նուիրական), **վէժ** (վիժել), **վէմ** (վիմագիր), **վէպ** (վիպակ), **վրէժ** (վրիժառու), **վրէպ** (վրիպել), **շէկ** (շիկնել), **շէն** (շինութիւն), **քէն** (քինախնդիր) եւ այլն: Բայց կան բառեր էլ, որոնց մէջ գրում է **է**, բայց այդ է-ն չի հնչիւնափոխուում, **ի** չի դառնում, ինչպէս՝ **աշխէտ** "բաց կարմիր", **հէն** "աւագակ", **խլէզ**, **կրկէս**, **հելլէն**, **պարէն**, **պարէտ**, **տէզ**, **քարտէզ** եւ այլն:

Այս պատճառով բառամիջի է-ագրութիւնը սովորելու համար պէտք է բառամիջում այդ տառն ունեցող բառերի ցուցակն ունենալ ձեռքի տակ: Դասական ուղղագրութեամբ գրելիս սկզբնական շրջանում կասկածելի բառը կարելի է ստուգել այդ ցուցակով, իսկ յետոյ վարժութեան շնորհիւ բոլոր այդ բառերը հիշուեն: Ստորեւ բերուած է միջում է ունեցող ամենագործածական բառերի այբբենական ցուցակը.

| | |
|--------|--------------------|
| աղեկէզ | գէթ |
| աղէտ | գէշ "տզէղ" |
| աղուէս | գէշ "մեռած մարմին" |
| ամէն | գէս "մազ" |
| անգէտ | գէտ "գիտենալը" |
| անգէն | գէր |
| անէծք | գմբէթ |
| անշէջ | գոմէշ |
| աշխէտ | դէզ |
| ապաւէն | դէմ |

| | |
|------------------------|------------------------|
| ապաքեն | դեմք |
| առնելտ | դէն |
| ասպարեզ | դեպի (նաև՝ դեպ, ի դեպ) |
| արդէն | դեպք |
| արալեզ | դէտ "դիտող" |
| արժէք | ելակետ |
| բզեզ | ելևէջ |
| բուեճ | եղեզ |
| բրէտ "պիծակ, իշամեղու" | երեց |
| զէնք | մեզ |
| զէնիթ | մեզ "միզելը" |
| ընդդէմ | մէկ |
| ընկեց | մէն |
| թէն | մէջ (մէջք) |
| թէժ | մէտ "միտելը" |
| թեպէտ | մողէս |
| ժամկէտ | յաւէտ |
| ժապաւէն | յետադէմ |
| լեզեոն | նշանդրէք |
| լէզ "լիզելը" | նուէր |
| խաբէութիւն | շահէն "թոշուն" |
| խէթ | շէկ |
| խէժ | շէն(ք) |
| խլէզ | ողջակէզ |
| ծէս | ուղէշ "ճիւղ" |
| ծովահէն | չեզոք |
| ծուէն | պանթէոն |
| կէզ "կիզելը" | պարէն |
| կէս | պարէտ |
| կէտ | պարտէզ |
| կողպէք | պէտք |
| կուզէկուզ | պնակալէզ |

| | |
|--------------|---------------|
| կրկես | ջրվեժ |
| կրես | ջրօրհնէք |
| հանդէպ | սեգ |
| հանդէս | սեգ |
| հեգ | սեր |
| հելլէն | սպառազէն |
| հէն "աւագակ" | վեճ |
| հիւսկէն | վեմ |
| հրաւեր | վեպ |
| հրեայ | վես |
| հրէշ | վերք |
| հրշէջ | վրեժ |
| ձէթ | տարեց |
| տեսակէտ | փորձագէտ |
| տեգ | փրփրադէգ |
| տեր | քարտեգ |
| տէրունական | քէն |
| տէրտէր | քնեած "թմրած" |
| տնօրէն | քրեական |
| փոխարէն | օրէն(ք) |
| | |

Ամէն բառի կապակցութեամբ պէտք է յիշել, որ այն գրուում է է-ով, բայց ե-ով են գրուում **ամենայն, ամենալաւ, ամենամեծ** եւ **ամենա-**ով կազմուած այլ բառեր: **Ընդամենը** գրուում է է-ով:

Պէտք է նկատի ունենալ, որ է-ն յաճախ պահպանուում է ցուցակի մէջ եղած բառերով կազմուած բարդ կամ ածանցաւոր բառերի մէջ: Երբ է-ով գրուող բառը դառնում է ածանցաւոր կամ բարդ բառի առաջին բաղադրիչ, նրա է-ն, ինչպէս ասուել է, սովորաբար դառնում է ի (գէտ - գիտուն, շէն - շինութիւն եւ այլն), բայց մի շարք դէպքերում էլ պահպանուում է, ինչպէս՝ **աղետալի, աղուեսային, արժէքաւոր, դէմառդէմ, դէմյանդիման, դէմդիմաց, թեական, կրկեսային, չեզոքութիւն, պատճէնում, պարետային, քարտեգագրութիւն** եւ այլն:

Օգտակար է յիշել է ունեցող մի շարք ածանցներ, վերջոյթներ ու բառեր, որոնք դառնալով ածանցաւոր կամ բարդ բառերի երկրորդ բաղադրիչներ, միշտ պահպանում են իրենց է-ն, այսինքն ունենում ենք է-ով նոր բառեր:

Ստորեւ բերուած են այդպիսի ածանցների, վերջոյթների ու բառերի ցանկը, իւրաքանչիւրի դիմաց դրուած է նրանով կազմուած մէկ կամ մի քանի բառ.

-- **արժէք** -- մեծարժէք, անարժէք, թանկարժէք

-- **արէն** -- շինարէն, յունարէն

-- **աւէտ** -- ծաղկաւէտ, բուրաւէտ, արդիւնաւէտ

-- **գէտ** -- գրագէտ, անգէտ, մասնագէտ, գականագէտ

-- **դէմ(ք)** -- խոժոռադէմ, անդէմ

-- **դէպ** -- հազուադէպ, միջադէպ

-- **դէտ** -- ակնդէտ

-- **եղէն** -- ոսկեղէն, ակնեղէն, բանջարեղէն, խմորեղէն

-- **երէն** -- հայերէն, պարսկերէն, ֆրանսերէն

-- **երեց** -- գահերեց

-- **էջ(ք)** -- առէջ, ելեւէջ, վայրէջք, ջրէջք

-- **զէն(ք)** -- սպառազէն, անզէն, ասպազէն, հրազէն

-- **էն**, -- **կէն** -- արդէն, պատճէն, ծակոտկէն, պարէն եւ այլն

-- է բացառականի վերջաւորութիւնը (գրաբար եւ արեւմտահայերէն)՝ ն յօղի հետ՝ **էն** -- **նորէն**, **քաղաքէն** եւ այլն: Ինչպէս եւ՝ **տնէտուն**, **բերնէբերան**,

ժամէժամ, **տարեցտարի**, **օրեցօր** եւ այլն:

-- **էք** -- արժէք, ջրօրհնէք, նշանդրէք

-- **ընկէց** -- գահընկէց

-- **ժէտ** -- ախտաժէտ

-- **լէգ** -- պնակալէգ

-- **կէգ** -- տօթակէգ, սիրակէգ, հրկէգ

-- **կէն** -- ճանճկէն

-- **կէտ** -- միջակէտ, ստորակէտ, բազմակէտ

-- **հանդէս** -- տօնահանդէս, շքահանդէս

-- **հրաւեր** -- մարտահրաւեր

-- **մէտ** -- հակամէտ

-- **մէջ** -- սնամէջ, մարդամէջ

-- **շէն** -- տնաշէն, հոյաշէն, նորաշէն

- շէջ -- հրշէջ, անշէջ
- պարտեզ -- մանկապարտեզ
- պէս -- ինչպէս, կատարելապէս, այսպէս, որպէս
- պէտ -- սակաւապէտ (բայց՝ պէտ, գնդապէտ, վաշտապէտ եւ այլն)
- պէտք -- անպէտք
- սէր -- աշխատասէր, բանասէր, հետաքրքրասէր, ընթերցասէր
- վէժ -- գահավէժ, ջրվէժ
- վէպ -- պատմավէպ, սիրավէպ, նորավէպ
- վէր(ք) - կաեվէր
- վրէպ -- անվրէպ, ժամանակավրէպ
- տէր -- տնատէր, սեփականատէր, հողատէր, տէրտէր
- քէն -- անքէն
- օրէն -- անօրէն (նաեւ յիշել է պէտք՝ ազատօրէն, փաստօրէն, հաւանօրէն)

Է-ով են գրուում ժողովրդային այնպիսի ձեւեր, ինչպէս՝ **հէր, մէր, ախպէր, գէլ** եւ այլն:

Բառամիջում է գրուում է նաեւ բայերի մի քանի ձեւերում. ինչպէս, օրինակ, անցեալի հետեւեալ ձեւերի մէջ՝ **գրէի, գրէիր, պիտի գրեր, պիտի գրէիր, գրէիք, բերէի, կրերէի, եթէ բերէի, ասէի, կգրէր** եւ այլն:

Է-ով են գրուում եւ օժանդակ բայի անցեալի ձեւերի՝ **էի, էիր, էր, էինք, էիք, էին**, ինչպէս նաեւ ներկայ ժամանակի յոգնակի երկրորդ դէմքը՝ **գրում էք, խօսում էք** եւ այլն:

Է-ով են գրուում հրամայականի ձեւերը -- **էք** վերջաւորութեամբ՝ **գրեցէ՛ք (գրէ՛ք), կարդացէ՛ք, ասացէ՛ք, խօսէ՛ք, խաղացէ՛ք** եւ այլն:

Չայնաւորից առաջ է լուեղիս գրուում է նոյնութեամբ՝ **է**, օրինակ՝ **քնեաճ, հրէական, այժմեական, Անդրէաս** եւ այլն:

Է գրուում է նաեւ ապառնիի ձեւերում, ինչպէս՝ **գրէք (եթէ գրէք), կգրէք (արդեօր կգրէ՞ք), պիտի գրէք, ուտէք** եւ այլն:

Ք-ից առաջ սովորաբար է լուեղիս գրուում է է:

Է-ով գրուում են մի շարք յատուկ անուններ, այդ թւում՝

-- **էն-ով** վերջացող՝ **Արմէն, Արսէն, Չաւէն, Խորէն, Կարէն, Շահէն, Ռուբէն, Սուրէն, Օզսէն, Աշխէն**

-- **գէն (կէն)-ով** վերջացող՝ **Բարգէն (կամ Բարկէն), Գուրգէն, Վազգէն, Վիգէն**

-- էլ-ով վերջացող՝ Աբել, Գաբրիել, Գնել, Դանիել, Մանուել, Միքայել, Իսրայել, Ռաֆայել, Անժել, Չաբել

-- էս-ով վերջացող՝ Արիստակես, Արտաշես, Մովսես, Յովհաննես, Ներսես, Վրթանես

-- էոս-ով վերջացող՝ Թադեոս, Մատթեոս, ինչպես նաև՝ Անդրեաս, Նազարեթ, Յովսեփ:

Այս անուններից կազմուած ազգանունների մէջ է-ն կարող է փոխուել ի-ի, կարող է պահպանուել, ինչպէս՝ Շահինեան, Մովսիսեան, Ներսիսեան, բայց եւ՝ Արմէնեան, Սուրէնեան, Իսրայէլեան, Դանիէլեան, Նազարեթեան: Կան նոյն ազգանունների զուգահեռ գրութիւններ՝ Կարինեան-Կարէնեան, Անդրիասեան-Անդրեասեան, Ներսիսեան-Ներսեսեան:

Է-ով են գրուում մի շարք տեղանուններ՝ Աթէնք, Մարսէլ, Ջէթուն, Եմէն եւ այլն: Ընդհանրապէս յատուկ անունների մէջ վերջին վանկում է լսուելիս գրուում է է (Կարէն, Բարզէն եւ այլն), բացառութիւն են -պետ վերջոյթ ունեցող անունները՝ Հայրապետ, Կարապետ, ինչպէս նաև Բարսեղ, Փառանձեմ եւ մի քանի այլ անուններ:

ոյ-ի եւ եա-ի գրութիւնները

Նոր ուղղագրութեամբ ույ երեք տառով արտայայտուած հնչիւնը դասական ուղղագրութեամբ գրուում է ոյ երկու տառով, ինչպէս՝ լոյս, բոյս, գոյգ, կոյս, նոյն, փոյթ, գոյն, առոյգ, քոյր, համբոյր, ցոյց եւ այլն: Նաև սրանցով կազմուածները՝ արշալոյս, տնաբոյս, միևնոյն, անփոյթ, բազմագոյն, մօրաքոյր, ուղեցոյց եւ այլն:

Նոր ուղղագրութեան յա տառագոյգի փոխարէն դասական ուղղագրութիւնն ունի եա տառագոյգը, ինչպէս՝ Թումանեան, Տէրեան, Գալստեան, առաւօտեան, ամերիկեան, ալպեան, ապրիլեան, երկարամեայ, կիրակնօրեայ, քրոստոնեայ եւ այլն: Նաև՝ Ազայեան, Սարոյեան, Գաոյեան, Թեքէեան եւ այլն, այսինքն՝ ա-ից եւ ո-ից յետոյ աւելանում է -յեան: Պէտք է գրել նաև՝ հայեացք, Գայեանէ, ախոյեան, դայեակ եւ այլն:

Դասական ուղղագրութեամբ միեւնոյն արժէքով բառասկզբում գրում է եւ **h** , եւ **j** , ընդ որում **h**-ով սկսուող բառերը շատ աւելի են **j**-ով սկսուողներից:

Ուրեմն, ճիշտ գրելու համար պէտք է յիշել, թէ որ բառերն են **j**-ով սկսում:

Եթէ գրական լեզուի բառասկզբի **h** հնչիւնը բարբառներում (Վանի, Խոյի, Բայազետի) հնչում է **խ**, գրական լեզուում գրում է **h**-ով, ինչպէս՝ **հաց - խաց, հայ - խայ, հա - խա** եւ այլն:

Բառասկզբում բաղաձայնից առաջ **h** լսուելիս մեծ մասամբ գրում է **h**՝ բացառութեան կարգով բաղաձայնից առաջ **j** է գրում մի քանի բառերում՝ **յղել, յղի, յղկել, յղփանալ, յստակ** եւ սրանցից կազմուածներում:

Եթէ բառասկզբում լսուող **h**-ն կարող է հանուել՝ բառիմաստի պահպանմամբ, ուրեմն մեծ մասամբ գրում է **j**, ինչպէս՝ **յաջող - աջող, յարձակուել - արձակուել, յօնք - օնք, ունք, յառաջ - առաջ, յետոյ - ետոյ, Յովհաննէս - Օհաննէս, Օհան, Յովսէփ - Օսէփ, Յակոբ - Ակոբ** եւ այլն:

Բայց այս կանոնները մասնաւոր բնոյթ ունեն, ճիշտը **j**-ով սկսուող բառերը յիշողութեան մէջ ամրակայելն է:

Կազմում է **j**-ով սկսուող բառերի ցուցակ (մօտ 100 բառ): Եթէ կասկածելի բառը չկայ այդ ցուցակում, ուրեմն **h**-ով է սկսում: Ստորեւ բերուած ցուցակի մէջ **j**-ով սկսուող բառերը հիմնականում ընդգրկուած են, դուրս են մնացել մի քանի հազուադէպ գործածուող բառեր (**j**-երից **յետոյ** հաշուի է առնուած բառերի այբբենական յաջորդականութիւնը):

| | |
|-------------------------|------------------|
| յագ(յագենալ) | յիշատակ |
| յաճանաւ | յիշոց |
| յախճապակի | յիսուն |
| յախուռն | յիրաւի |
| յականէ | յղի |
| յակիինթ | յղել |
| յաղթ (յաղթել) | յղկել |
| յաճախ | յղփանալ |
| յամառ | յոբելէան |
| յայտ (յայտնի, յայտագիր) | յոզն (յոզնել) |
| յանգ (յանգել) | յոզնակի |
| յանդիման | յոխորտալ |
| յանդիմանել | յողդողդ "խախուտ" |
| յանդուզն | յոյզ |

| | |
|--------------------------|--------------------------------|
| յանկարծ | յոյժ |
| յանկերգ | յոյն (յունարեն) |
| յանձն (յանձնել) | յոյս |
| յանցանք | յոպոպ |
| յանցագործ | յոռի |
| յապաղել | յովագ |
| յապաւել | յովատակ |
| յաջող | յորդ |
| յաջորդ | յորդոր |
| յառել | յորձ (յորձանք) |
| յառնել | յորջորջել |
| յասմիկ "ծաղիկ" | յուգել |
| յասպիս "քար" | յուլիս |
| յատակ | յուղարկ (յուղարկաւորութիւն) |
| յատուկ | յունապ |
| յար "կից, միշտ", (յարել) | յունիս |
| յարաբերութիւն | յունիս |
| յարատեւ | յունուար |
| յարգ (յարգել) | յուշ |
| յարդ "դարման" | յուռթի |
| յարդարել | յուռութ |
| յարկ, յարկանի | յուսակ |
| յարձակուել | յատակ |
| յարմար | յօդ |
| յարութիւն, Յարութիւն | յօդուած |
| յաւակնել | յօժար |
| յաւելեալ | յօնք |
| յաւերժ | յօշոտել |
| յաւէտ | յօրանջ |
| յափշտակել | յօրինել |
| յեղ (յեղափոխութիւն) | |
| յեղեղուկ | |
| յեն (յենարան) | |

| | |
|---------------|--|
| յեսան | |
| յետ (յետադաս) | |
| յետոյ | |
| յերիւրանք | |
| յիմար | |
| յիշել | |
| | |
| | |

Ցուցակում ընթերցողին քիչ ծանօթ որոշ մասնիկների ու բառերի մօտ փակագծում դրուած է նրանցից կազմուած որևէ հանրայայտ բառ:

Չակերտներում որոշ բառեր բացատրուած են:

Պէտք է իմանալ, որ եթէ յ-ով է սկսուում, նրանցից կազմուած բոլոր ածանցաւոր կամ բարդ բառերի մէջ յ-ն պահպանուում է: Օրինակ, ցուցակում կայ **յարմար** բառը, այդ բառից կազմուած **անյարմար, յարմարութիւն, յարմարաւէտ** եւ այլ բառերի մէջ յ-ն մնում է: Վարժութեան համար բերում են ցուցակում դրուած մի շարք բառեր եւ նրանցից կազմուածները:

յախճապակի -- յախճապակեայ, յախճապակէպատ

յաճախ -- յաճախել, յաճախապատում, յաճախում, յաճախականութիւն, յաճախակի

յամառ -- յամառութիւն, յամառել, յամառօրէն

յանդիման -- յանդիմանել, դէմ յանդիման, յանդիմանութիւն, անյանդիման

յանձն(ել) -- յանձնարարել, յանձն առնել, յանձնառու, յանձնաժողով, յանձնախումբ

յապաղել -- անյապաղ, յապաղում

յաջորդ -- յաջորդաբար, յաջորդել, յաջորդականութիւն, յաջորդում

յատակ -- յատակագիծ, անյատակ

յատուկ -- յատկութիւն, իւրայատուկ, յատկապէս, յատկանիշ, անյատկանիշ, յատկանշական, յատկացնել, յատկացուցիչ

յարգ -- յարգել, յարգանք, մեծայարգ, յարգելի, յարգուած, անյալգելի

յարդ -- յարդանոց, Յարդագողի ճանապարհ

յարմար -- անյարմար, յարմարուել, յարմարութիւն, անյարմարութիւն, յարմարաւէտ

յաւէտ -- յաւիտենական, առյաւէտ, յաւիտեան
յաւերժ -- յաւերժական, յաւերժութիւն
յիմար -- յիմարութիւն, յիմարանալ
յիսուն -- յիսնամեակ, յիսունական
յորդ -- յորդառատ, յորդացող, յորդել, յորդահոս, յորդաբուխ
յորդոր -- յորդորել, յորդորակ
յուշ -- յուշիկ, յուշագիր, յուշել, յուշարար, յուշարձան, յուշամատեան, անյուշ, վերյուշ
յոյս -- անյոյս, յուսալ, յուսահատ, յուսաբեկ, յուսադրել, յուսահատութիւն, յուսախաբ
յօդ -- յօդավաւ, յօդակապ
յօժար -- յօժարել, յօժարակամ, յօժարութիւն

Հիմա էլ մի քանի օրինակ եմ բերում ցուցակում եղած (նաեւ փակզծում նշուած) ու նրանց հիմքերով կամ արմատներով կազմուած եւ յ ունեցող բառերի:

Յագենալ (յագ-ից)՝ յագուրդ, անյագ, յագեցում
յաղթել (յաղթ-ից)՝ յաղթանակ, անյաղթ, յաղթութիւն, յաղթական, յաղթանդամ, յաղթահասակ
յանցանք՝ յանցակազմ, յանցաւոր, յանցակիր, անյանցանք, յանցապարտ, յանցագործ, յանցագործութիւն, յանցանշան
յայտնի՝ անյայտ, անյայտանալ, բացայայտ, յայտնել, յայտնաբերել, յայտագիր, յայտնագործել, յայտնապէս, յայտնութիւն
յաջող՝ յաջողակ, յաջողութիւն, յաջողել
յաջորդ՝ յաջորդաբար, յաջորդել, յաջորդական
յարել (յար)՝ յարաբերել, յարաբերութիւն, անյարիր, յարակատար, յարակից, յարահոս, յարաճուն, յարատեւ, յարացոյց, յարափոփոխ
յաւակնել՝ յաւակնոտ, յաւակնութիւն
յաւէտ՝ յաւիտեան, առյաւէտ
յեղափոխութիւն՝ յեղափոխական, հակայեղափոխական, յեղափոխել
յեն(արան)՝ յենել, յենակէտ
յետադաս (յետ)՝ յետադէմ, յետադիմութիւն, յետնորդ, յետգրութիւն, յետադարձ, յետին, յետոյք, յետամնաց

յիշեւ (յիշ)՝ յիշողութիւն, յիշատակ, յիշաչար, անյիշաչար, վերոյիշեալ, յիշատակարան
յի՝ յիութիւն, յիանալ, յղանալ, յղացում, մտայղացում
յղկել՝ յղկուածութիւն, յղկուած, անյղկել
յոգնել՝ յոգնածութիւն, յոգնութիւն, յոգնաբեկ, յոգնակի, անյոգնական, յոգներամ, յոգնակիութիւն
յողողող՝ անյողողող
յոռի՝ յոռետես, յոռետեսութիւն
յուզել (յոյզ)՝ յուզական, անյոյզ, յուզիչ, մտայոյզ, յուզմունք
յորձանք՝ յորձանուտ
յուլիս՝ յուլիսեան
յստակ՝ անյստակ, յստակել, յաստակութիւն
յօրինել՝ յօրինուածք, յօրինող եւ այլն:

Կան յ-ով սկսուող մի քանի յատուկ անուններ՝ Յաբեթ, Յակոբ, Յարութիւն, Յիսուս, Յոբ, Յովակիմ, Յովհաննէս, Յովնան, Յովսէփ, Յուդա, Յուսիկ, Յասմիկ:

Բառավերջում յ

Դասական ուղղագրութեամբ բառավերջում **ա**-ից և **ո**-ից յետոյ դրում է չարտասանուող **յ**, օրինակ՝

| | |
|---------|-------------|
| ծառայ | խաբեքայ |
| երեխայ | օտարերկրեայ |
| տղայ | կաթսայ |
| արքայ | կապուտաչեայ |
| քահանայ | հեառակայ |
| մեքենայ | մեղայ |
| շուկայ | մերձակայ |
| պողոտայ | ներկայ |
| սպայ | փիլիսոփայ |
| ականայ | փեսայ |
| կայ | պարագայ |

| | |
|----------|-------------|
| չկայ | տեսայ |
| առկայ | կերայ |
| վկայ | եկայ |
| սևաչեայ | անհաճոյ |
| անխնայ | բարեբարոյ |
| գուլպայ | խստաբարոյ |
| ենթակայ | երեկոյ |
| եռամեայ | հաւաքածոյ |
| եռօրեայ | ձուլածոյ |
| երկաթեայ | բարձրահաճոյ |
| ապագայ | մեծարգոյ |
| առարկայ | եւ այլն |
| լումայ | |

Կան մի քանի բառեր, որոնք վերջում **ա** կամ **ո** ունեն, բայց յ չեն առնում, ինչպէս՝ **սա, դա, նա, սրա, դրա, նրա, հիմա, ապա, ահա, հա, այո, քո**:

Բայերի հրամայականի ձևերը, որոնք վերջանում են **ա**-ով, նոյնպէս յ չեն առնում: Օրինակ՝ **կարդա՛, խաղա՛, ասա՛, համարեա** եւ այլն: Բայց ապառնիի եւ կատարեալի ձևերը յ առնում են, ինչպէս՝ **թող խաղայ, կխաղայ, պիտի խաղայ, կկարդայ, թող զարմանայ, թող ստանայ, կստանայ, պիտի կարդայ, կերայ, ստացայ, հասայ** եւ այլն:

Յ դրում է նաեւ արգելականի վերջում՝ **մի՛ կարդայ, մի՛ խաղայ, մի՛ ասայ** եւ այլն:

Նոր փոխառեալ օտար բառերի եւ անունների վերջում յ չի դրում, ինչպէս՝ **աղա, փաշա, ամիրա, Ամերիկա, Իսպանիա, Ֆրանսիա, Վոլգա, Գերմանիա, կակաո, Մարոկո** եւ այլն: Բայց հայ մատենագրութեամբ աւանդուած անունների վերջում **ա**-ից յետոյ յ դրում է, օրինակ՝ **Հրաչեայ**: **Յ** դրում է նաեւ գրաբառի՝ սեռական հոլովով արտայայտուած տեղանուններում **ա**-ից յետոյ, ինչպէս՝ **Վանայ ժածիկ, Վանայ լիճ, Սևանայ լիճ, Սևանայ թերակղզի, Փարուանայ լիճ** և այլն:

Միայն մի քանի բառեր կան, որոնցում վերջում **ա**-ից և **ո**-ից յետոյ դրուող յ-ն կարդացում է՝ **հայ, բայ, վայ, Նոյ, խոյ** եւ այլն:

Բառամիջում օ

Դասական ուղղագրութեամբ բառասկզբում օ լսուելիս օ է գրում, ինչպես՝ **օգուտ, օգնել, օդ, օդ, օր, օրաւոր, օձ, օրէնք, օրհաս, օրհնութիւն, օրինակ, օտար** եւ այլն: Բացառութիւն է վ-ից առաջ դրուող **ո** տառը, որ **օ** է կարդացվում՝ **ով, ովկիանոս, Ովսաննայ:**

Բառավերջում օ լսուելիս գրում է **ոյ**, ինչպես՝ **յետոյ, երեկոյ** եւ այլն: Ինչպես գիտենք, մի քանի բառերի վերջին **ո**-ն առանց **յ** է գրում (**քո, այո**):

Ոմանք **օ** հնչիւնով վերջացող յատուկ անունները **օ**-ով են գրում՝ **Պրօ, Միամանթօ, Մարօ, Պեպօ** եւ այլն: Բայց ամէն դէպքում դասականին աւելի մօտ է բառավերջի **ոյ**-ը:

Բառամիջում օ լսուելիս մեծագոյն մասամբ գրում է **ո՝ կով, սով, գործ, մոլոր, բոլոր** եւ այլն:

Բառամիջում օ գրում է գլխաւորապէս երկու դէպքում. 1) երբ ածանցաւոր կամ բարդ բառերի մէջ երկրորդ բաղադրիչը **օ**-ով է սկսւում, ինչպէս՝ **անօրէն, ապօրինին, տարօրինակ, բնօրինակ** եւ այլն: 2) Մի շարք բառերի մէջ էլ **օ** է գրում գրաբարեան բախկին **աւ**-ի փոխարէն: Ինչպէս, օրինակ, հնում գրուել է **առաւաւտ**, յետոյ՝ **առաւօտ, կարաւտ՝ կարօտ** եւ այլն: Մա բաղաձայններից առաջ է, իսկ ձայնաւորներից առաջ եւ բառավերջում հին **աւ**-ը մնացել է (հնչում է՝ **ավ**)՝ **աւագ, նաւ, կաւ** եւ այլն:

Առհասարակ բառամիջի **օ**-ն պէտք է ուղղակի յիշել: Կազմւում է միջում **օ** ունեցող բառերի ցուցակ եւ դարձեալ՝ պէտք է յիշողութեան մէջ ամրակայել այդ բառերը: Բերում են այդ բառերի ցուցակը.

| | |
|----------|------------------|
| ակօս | խօս(ք), խօսել |
| աղօթք | ծանօթ |
| աղօտ | ծղօտ |
| աղօրիք | ծնօտ |
| ամօթ | կարօտ |
| անօթ | կտրօտ |
| անօթի | կրօն |
| ապարօշ | կօշիկ |
| առաւօտ | համառօտ |
| արտօնեալ | հետագօտել |

| | |
|----------------------|------------------------|
| արտօւր | հօտ "ոչխարի հօտ" |
| արօտ | ձօն |
| արօր | դօղանջ |
| բռնագբօսիկ | ճօճ |
| բօթ | մօտ |
| գօշ | մօր "ճահճուտ" |
| գօս | մօրուք |
| գօսի | յօղ |
| դրօշ | յօժար |
| դրօշ | յօնք |
| եօթն(ը) | յօշոտել |
| գբօսնել | յօրանջ |
| գգօն | յօրինել |
| գօղ | նարօտ |
| գօշաքաղ "փողասէր" | պաշտօն |
| գօր(ք) | պոշ |
| գօրավիգ | սօլ |
| գօրեղ | սօսի |
| թափօր | սօսափ |
| թօթափել | վառօղ |
| թօն "անձրեւ" | տօթ |
| թօթուել | տօն |
| թօշնել | ցօղ |
| լօթի | ցօղուն |
| լօլիկ | քօղ |
| խօլ | օրօր |

Կան մի քանի ածանցներ **օ**-ով գրուող, անհրաժեշտ է յիշել եւ համապատասխան բառերի մէջ պահել **օ**-ն: Դրանք են՝
-առօտ՝ համառօտ, կարճառօտ

-**եօք**՝ արդեօք, ընտանեօք, կարծեօք
-**օն**՝ գեղօն, գործօն, թափօն, թերթօն, ջարդօն
-**օնք**՝ զարթօնք
-**օրէն**՝ գգուշօրէն, հաւանօրէն, վեհօրէն
-**օք**՝ իրօք, օրօք, նախօրօք, վաղօրօք, իսելօք, առօք-փառօք եւ այլն:

Բառեր կան, որոնց սեռական-տրական հոլովը **օ**-ով է գրուում, ինչպէս՝ **մայր-մօր, հայր-հօր, եղբայր-եղբօր, այստեղից էլ՝ մօրաքոյր, հօրաքոյր, մօրեղբայր, հօրեղբայր, եղբօրորդի** եւ այլն:

Ե-ից յետոյ **օ** լսուելիս **օ** է գրուում՝ **եօթն, արդեօք** եւ այլն: Այսինքն՝ նոր ուղղագրութեան **յո**-ն դասականով գրուում է **եօ**:

Լրացուցիչ կարելի է յիշել նաև, որ՝

- 1) ձայնաւորից առաջ պարզ բառերի մէջ **օ** չի գրուում,
- 2) **օ**-ն գրուում է երկու բաղաձայնների միջեւ,
- 3) **օ** ունեցող բառերը մեծ մասամբ մէկ կամ երկու վանկանի են:

Բառամիջում **օ** ունեցող բոլոր բառերն ու ածանցները իրենց այդ **օ**-ն պահպանում են ցուցակում բերուած բառերից ու ածանցներից կազմուած բոլոր բարդ եւ ածանցաւոր բառերում, ինչպէս եւ այն բառերի մէջ, որոնցում առկայ են ցուցակում բերուածների հիմքերը կամ արմատները: Օրինակ՝

աղօթք՝ աղօթել, աղօթատուն, աղօթագիրք

աղօտ՝ անաղօտ, աղօտանալ

ամօթ՝ անամօթ, ամօթխած

արտօնեալ՝ արտօնել, արտօնութիւն, արտօնուած

բօթ՝ բօթաբեր, բօթագուշակ

գօտի՝ պարեգօտ, գօտեպնդել, գօտեմարտ

դրօշ՝ դրօշակ, դրօշակակիր, անդրօշակ

եօթն՝ եօթնապատիկ, եօթնօրեակ

զբօսնել՝ զբօսաշրջիկ, զբօսնող, զբօսավայր

զօդ՝ զօդել, զօդուած

զօր՝ զօրք, զօրամաս, զօրագունդ, զօրաբանակ, համագօր, հզօր, զօրավիզ,

լիագօր, ի զօրոյ, զօրութիւն, անզօր, զօրահանդէպ

խօլ՝ խօլական

խօս` խօսք, անխօս, ստախօս, մեծախօս, շատախօս, հրապարակախօս,
բացխօսութիւն, խօսքակոչիւ
ծանօթ` անծանօթ, ծանօթութիւն, ծանօթագութիւն, ծանօթանալ
կարօտ` կարօտել, կարօտակէզ, կարօտավառ, սիրակարօտ
կրօն` կրօնական, անկրօն, կրօնաւոր, կրօնասէր
կօշիկ` կօշկակար, կօշկէղէն, անկօշիկ
հետազօտել` հետզօտութիւն, գիտահետազօտական, հետազօտող
հօտ` հօտաղ
ձօն` ձօներգ, ձօնել
դողանջ` դողանջել, անդողանջ
մօտ` մօտիկ, մօտից, մօտենալ, մօտակայ, մօտաւոր
մօր` Մեծամօր
մօրու` մօրուք (նաեւ մօրուս)` մօրուքաւոր, անմօրուք
նօսք` նօսքանալ, նօսքացող
շօշափել` շօշափուկ, շօշափելի
պաշտօն` անպաշտօն, պաշտօնավարել, պաշտօնեայ, պատշտօնանկ
պոռ` Պոռէան, պոռշտի
սօսափ` սօսափիւն, սօսափել
տօթ` տօթակէզ
ցօղ` ցօղել, ցոգաշաղախ, Յոզիկ
քօղ` քօղարկել, քօղարկութիւն
օրօր` օրօրել, անօրօր եւ այլն: